Կապանի ԼՀԿ ՓԲԸ տնօրենԴմիտրիՈւշկովին

Լրագրող Փառանձեմ Հովհաննիսյանից

Հարցում

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42 և 51 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ՝ ներքոնշյալ հարցերի մասով.

1. 25-05-2016թ.-ի Կոմբինատի նախկին աշխատող Ասյա Միրզոյանի դիմումին պատասխանելիս արդյոք առաջնորդվե՞լ եքաշխատավարձի հաշվարկային թերթիկներով
2. Ինչպե՞ս է ստացվել, որ նախկին տնօրենի հաշվարկով 2008-2010թթ. Ա. Միրզոյայնի աշխատավարձի պարտքը կազմել է 700.000 (Յոթ հարյուր հազար) դրամ, իսկ ձեր հաշվարկով 2005-2010թթ. Ա. Միրզոյանի աշխատավարձի պարտքը կազմել է 138.452 (հարյուր երեսունութ հազար չորս հարյուր հիսուներկու) դրամ
3. Ի՞նչն է պատճառը, որ չեք պատասխանել դիմումի մեկ այլ հարցման, այն է՝ տրամադրել աշխատավարձի հաշվարկային թերթիկները, որպեսզի նախկին աշխատակիցը հնարավորություն ունենա իր փաստաբանի հետ հաշվել աշխատավարձի պարտքը
4. Նախկին աշխատավարձերի պարտքերը մարելիս արդյոք ներկայիս հարկային օրենսդրությա՞մբ, թե՞ աշխատելու պահին գործող օրենսդրությամբ եք հաշվում պահումները՝ հաշվի առնելով օրենքի՝ հետադարձ ուժ չունենալու հանգամանքը
5. Քանի՞ աշխատակիցունիկոմբինատը
6. Քանի՞ աշխատակից է աշխատանքից ազատվել 2015-16թթ.
7. Ինչո՞ւ որոշում կայացվեց 9 մլն դրամանոց աշխատավարձերը կրճատել
8. Ի՞նչ մասնագիտությունների մասով է պակաս և ավելցուկ նկատվում կոմբինատում
9. Նախկին աշխատավարձերի պարտքերի քանի՞ տոկոսն է մարված
10. Ի՞նչ սոցիալական փաթեթներ են մշակվում Կապան քաղաքում իրականացնելու համար
11. Աշխատանքային խեղում ստացածների համար ի՞նչ փաթեթներ կան
12. Տնօրենի հետ ևս քանի՞ աշխատակից է ժամանել Կապան արտերկրից
13. Բնապահպանական ի՞նչ միջոցառումներ/ծրագրեր են իրականացվում
14. 2004-ից շահագործվող պոչամբարում 2016-ի տվյալներով տարեկան կտրվածքով ի՞նչ քանակությամբ և վտանգավորության դասի թափոններ են առաջացել
15. Ամսեկան կտրվածքով որքա՞ն հանքաքար է արտահանվում

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Շնորհակալություն

Լրագրող՝ Փ. Հովհաննիսյան 093-01-98-44